

ՄԻՒԹԱՐՅԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՅԱՅ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀԱՐՑԵՐԸ

(Մկրտիչ Ավգերյանի փորձը)

Մ.Ավգերյանը Վենետիկի Մխիթարյան միաբանության ամենահայտնի դեմքերից մեկն է, որը ծավալել է բազմակողմանի ու բեղմնավոր գործունեություն թողնելով ինքնուրույն ու թարգմանական հարուստ գրական ժառանգություն: Արևմտահայերենի պատմության ուսումնասիրության համար արժեքավոր են նրա «Բարի խորհուրդներ» (1809), «Դեղ կենաց» (1810) և «Բանաստեղծութիւն չորս ետքերնուս վրայ» (1810) երկերը, որոնք գրված են իր ժամանակի արևմտահայերենով: Նշված երկերից երկուսը չունեն նախաբաններ կամ վերջաբաններ, սակայն վերնագրից անմիջապես հետո ծանուցում է տրվում գրքի լեզվի մասին: Այսպես, «Բարի խորհուրդներ» գրքում տրված է հետևյալ ծանուցումը. «Ի Ստամպոլ անտեղաց լեզուով», իսկ «Բանաստեղծութիւն...» գրքի վերնագրից հետո արված է հետևյալ ծանուցումը՝ «Գրաբառէն էտև աշխարհաբառ ռամկօրէն գրած՝ ամմէն մարդու պէտք ըլլալու համար և դպրատան տղոց՝ բաղդատութեամբ վարժելու ի գրոց լեզու»:

Չնայած ծանուցումների հակիրճությանը՝ Մ.Ավգերյանը պարզորոշ արտահայտում է իր որոշ տեսակետները մասնավորապես Պոլսի բարբառի, աշխարհաբարի հասկանալիության և պիտանիության, ինչպես նաև գրաբար սովորելու միջոց լինելու մասին: Սրանք տեսակետներ էին, որ արտահայտել էին նաև այլ Մխիթարյաններ:

«Դեղ կենաց» երկն ունի վերջաբան՝ «Վերջաբանական յորդոր առ գրագիտութիւն, ըստ որում է դեղ առողջարար հոգւոց», որտեղ Մ.Ավգերյանը համեմատաբար ընդարձակ դատողություններ է անում ուսման, գիտությունների, զարգացման և հայերենի վերաբերյալ՝ մեկը մյուսի հետ առնչելով: Այս գրքի վերնագրից հետո արված ծանուցման մեջ ևս Ավգերյանը նշում է, որ գիրքը գրված է «Ի լեզու Կոնստանդնուպօլսոյ»: Խոսքի առաջին

մասում մեջբերելով աստվածաշնչյան «Ջննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանս հաւիտեանական» արտահայտությունը կրոնաբարոյախոսական բնույթի հորդոր է կարդում ընթերցողներին. որ գիտությամբ և իմաստասերների ու իմաստունների գրքերի իմացությամբ կարելի է հասնել հոգեպես կատարյալ կյանքի: Դա կարելի է անել անընդհատ ուսումնասիրությամբ ու քննությամբ «սուրբ գրոց և գրեանց սբ. վարդապետաց»: Այնուհետև, ասածը մասնավորելով հայոց վրա, գրում է. թե «մեր ազգին մէջն, որ կուզենք աւելի ծաղկեցնել զներքին և զարտաքին գիտութիւն, էն առաջ ջանանք գրագիտութեան դուռը բանալ»¹: «Դուռը գոց է նէ ինչով կըբացուի. հարցնում է Ավգերյանը և ամմիջապես էլ պատասխանում, - յայտ է թէ բաւլիքով»: Գրագիտության դռան բանալին լեզուն է, իսկ «գրոց գիտութեան» բանալին՝ «գրոց լեզուն, որ է ասել գրաբառ կամ գրաբարբառ»: Այստեղից, բնականաբար, հետևում է այն միտքը, որ պետք է սովորել գրաբարը՝ «գրոց լեզուն»: Այս առումով էլ կարևորում է Ա. Սեբաստացու գործունեությունը և հատկապես նրա կազմած բառգիրքը, որը հնարավորություն էր ընծեռում խորանալու գրաբարի իմացության մեջ և գրաբարով ավելի բարձր բաներ «դուրս հանելու»:

Սակայն իրականությունն այլ էր, ուստի անհրաժեշտ էր ոչ թե խորացնել գրաբարը, այլ այն դարձնել ավելի դյուրընկալ և մատչելի, բայց ժամանակի հետ ընթացող Մխիթարյանը քարացած վերաբերմունք չի ցուցաբերում գրաբարի նկատմամբ և ենթարկվում է ժամանակի պահանջին: «Ցաւին կեօրէ դեղ տալը հարկաւոր տեսնալով՝ հարկաւորեց մեզ, որ շատ բան չէ թէ միայն պարզ և դիւրիմաց գրաբառ ընենք, հապա նաև աշխարհաբառ գրքեր ալ հանենք»², - գրում է Ս.Ավգերյանը: Սյուս Մխիթարյանների նման Ս. Ավգերյանը ևս իր չափով փորձում է իրագործել միաբանության նախնական նպատակադրումը՝ կրթել ու լուսավորել ազգը, իսկ դա հնարավոր էր իրականացնել միմիայն ժողովրդին հասկանալի լեզվով: Նա, իհարկե, գնահատում է գրաբարը, նրա կանոնավոր ու «վարպետ» լեզու, «բուն

¹ Ս. Ավգերյան, Դեղ կենաց, Վենետիկ, 1810, էջ 309:

² Նույն տեղում, էջ 310:

նախնեաց աւանդութիւն» լինելը, իսկ գրաբարի «կանոնավորութիւնն ու ճոխութիւնը հնարավորութիւն էր տալիս առանց ճիգ ու ջանքի շարադրել մտադրվածը, մի բան, որ անհնար էր անել կանոնի չեկած աշխարհաբարով: Գրաբարի այդ առանձնահատկութիւնը նկատի ունի Մ. Ավգերյանը, երբ գրում է. «Աս գիրքս գրաբառ շինէ՛ ինծի տասը խաթ խօլայ էր ու քառսուն խաթ ալ անուշ կուգար»¹: Սակայն նրա համար տվյալ դեպքում կարևորը ոչ թե գրվածքի լեզուն է՝ գրաբա՞ր, թե՞ աշխարհաբար, այլ ժողովրդին «բան հասկըցընելը». «Ձերէ նիէթս աստեղը լեզու սորվեցնել չէ, բան հասկըցընելն է Օգոստինոսին ըսածին պէս բալլիքը դուռը բանայ տէ, կուզէ ոսկի բալլիք է եղեր, կուզէ երկթէ , կուզէ փայտէ»², - դատում է նա: Աշխարհաբարին դիմելը թելադրվում էր «ժողովրդի հալը հասկընալէն»: Ինչպէս ինքն է ասում, «բան հասկըցող մարդը կըհասկընայ, որ ժողովրդին հալը հասկընալէն կուգայ ասանկ բան ընելը»³: Գրաբարի առավելութիւններն ընդգծելով համդերձ՝ Մ.Ավգերյանն անմիջականորեն ընդունում է նաև նրա անօգտակարութիւնը՝ ժողովրդին «բան հասկըցնելու» գործում. «Քիչ մալ խայրէ՞ ընեն.կաղաչեմ, զերէ մէկ կողմանէ մը շատ հարկաւոր, օգտակար և զուարճալի բաներ կան հանելու գրոց լեզուաւ, բայց արդեն ելածներն որ չեն հասկընար, ինչ ընենք»⁴: Ամեն տեսակի «կոպտութիւնք և անկարգութիւնք» առաջ են գալիս անուսումնութիւնից, մինչդեռ «յայտնի է, որ ամենէն պիտուական բաներ, բարակ արհեստներ ալ, ուսման պտուղ է»: Իմաստուններն ու ուսումնառուները միայն կարող են «ճանչնալ կամ պատմել կամ գովել» գիտության և իմաստության արդյունքները և «հասկընալ անիմաստութեան վնասները»: Իր այս միտքն հաստատելու համար Մ.Ավգերյանը մեջբերում է գրաբար մի քանի իմաստութիւններ և լեզվական տեսակետից համեմատելով գրաբարն ու աշխարհաբարը՝ անում է հետևյալ եզրակացութիւնը. «Կտոր մը գրաբառ հասկըցողը աս խօսքերէս շատ բարակ բան կըհասկընայ ու աւելի գրագետ և

¹ Նույն տեղում, էջ 312:

² Նույն տեղում, էջ 310:

³ Նույն տեղում, էջ 310:

⁴ Նույն տեղում, էջ 310:

իմաստուն ըլլալու սիրտը կը վառուի: Իսկ եթէ աշխարհաբառ ուզենայի թարգմանել սբ. գրոց կամ վարդապետաց վկայութիւնները, ոչ նոյն բարակ միտքը մեյտան կելլեն և ոչ նոյն անուշ համը կառնուէր»¹:

Փաստորեն, ասվածից երևում է՝ Մ.Ավգերյանը նկատի ունի աշխարհաբարի բառապաշարի, լեզվական այլ միջոցների աղքատությունը, մի իրողություն, որ արձանագրել են ոչ միայն Մխիթարյանները, այլև այդ ժամանակի գրեթե բոլոր գրագետները, ուստի մեկ անգամ ևս կարելի է ասել, որ հակավածությունը դեպի գրաբար ոչ թե կույր սիրո արդյունք և պահպանողականության արգասիք էր, այլ «բարակ միտք մեյտան» հանելու ձգտում ու ցանկություն: Եվ, այնուամենայնիվ, Մ.Ավգերյանը Մխիթարյաններից առաջիններից է, որ հանդես է գալիս աշխարհաբարի *ուղղակի* պաշտպանությամբ: «Ես ուրիշ բան մալ ունիմ պրպտելու, որ գիտնոց և տգիտաց միապէս հարկաւոր է գիտնալը, - գրում է նա, - այսինքն՝ ամմեն ազգի մեջ աշխարհաբառ լեզուն իրաւ որ գրով ալ ծաղկեալ է, մանավանդ թէ աշխարհաբառ գիրք չըլլայ նէ, գրաբառ գրքերուն խըյմէթը չիգիտցուի որ գրաւոր գիտութիւն ալ շատ առաջ չերթար, ուստի ինքեար չեն ըներ աշխարհաբառին պիտանութիւնն ալ»²: Այս ընդարձակ մեջբերումն արեցինք ցույց տալու համար, որ նախ, Մ. Ավգերյանն անուղղակիորեն, այլ ազգերի օրինակով հավաստում է, որ աշխարհաբարն էլ «գրով» կարող է ծաղկել և, ապա, նշում, որ առանց աշխարհաբար գրքերի, գրաբար գրքերի արժեքը չի իմացվի, և գիտությունն էլ չի զարգանա: Վերջին դեպքում հեղինակն, իհարկե, նկատի ունի այն, որ աշխարհաբարը կարող է բանալի լինել գրաբար սովորելու համար: Այսպես արժեքավորելով աշխարհաբարը՝ Մ.Ավգերյանը, սակայն, ընդհանրացնելով, առաջնությունը տալիս է գրաբարին, որովհետև «չէ թէ միայն ամմեն բան աւելի շենքով և շնորհով կըլլայ գրաբառ (վասն զի է կանոնաւորեալ և վարպետ լեզու և բուն նախնեաց աւանդութիւն...), հապա նաև բուն գիտութիւն և իմաստութիւն ասածնիս, մանաւանդ աստուածայինն, գրոց լեզուաւ կըվայլէ, գրոց լեզուաւ խորունկ կըհասկըցընէ ու կըհասկըցուի և աւելի կըմօտեցնէ միտք աստծոյ»³:

¹ Նույն տեղում, էջ 311:

² Նույն տեղում, էջ 311:

³ Նույն տեղում, էջ 312:

Համեմատելով արևելքն ու արևմուտքը՝ Մ.Ավգերյանը արևմուտքի «ամմեն իմաստութեամբ և գիտութեամբ» լուսավոր լինելը կապում է «գրոց լեզվի» ծաղկած լինելու հետ, բայց երբ «գրաբառեն ծանծըրցան ու աշխարհաբառի ընկղմեցան նե, ամմեն կերպ պիտանի և անպիտան բաներ շատցան չափե ի դուս»¹։ Ինչևէ, Մ.Ավգերյանը, «Ինչու» ես իմ տերտս թողեր եմ ու լորիշի տերտը կըրիոգամ» ասելով, մի կողմ է թողնում արևմուտքի և արևելքի խնդիրը և վերադառնում հայոց պակասություններին։ Այդ պակասություններից առաջինն այն է, որ խախտվել է մեկ ազգ մեկ լեզու միասնությունը, և հետո՝ սեփական լեզուն ավելի վատ գիտեն հայերը, քան օտար լեզու, այստեղից էլ հետևում է, որ իրար լավ չհասկանալու հետևանքով միմյանց չեն կարողանում օգնել։ Մեջբերենք այս միտքն ամբողջությամբ. «Մեր ազգին մեծ պակսութիւնը (շատ կողմանէ՝ շատ բանին մէջ) աս չէ՞մի, որ մէկ լեզու , մէկ ազգ չէ, ինչպէս որ պէտք էր .իր լեզուն այնչափ չի գիտեր, որչափ օտար լեզու, ուստի ոչ իրարու խօսք աղէկ կըհասկընան (որ է արմատ անմիաբանութեան և սկիզբն բաժանման, ինչպէս Բաբելոնը եղավ) և ոչ իրենց կամ եղբարցը տէրտը գիտեն, որ անոր կեօրէ դեղը ընեն»²։ Ինչպես երևում է, Մ.Ավգերյանը հարցին տալիս է նաև հասարակական - քաղաքական հնչեղություն. ազգային միասնությունը մեծ չափով պայմանավորված է նաև լեզվական միասնականության գործոնով, լեզվական փոխադարձ անհասկանալիությունը կարող է հանգեցնել ազգային անմիաբանության արմատավորմանը և բաժանումների սկիզբ դառնալ, մյուս կողմից էլ օտար լեզվի յուրացումը պարտադրված, թե կամավոր, կարող է տանել ուժացման։ Այստեղ Մ.Ավգերյանը նաև մեկ անգամ ևս փաստում է ընդհանուր ազգային հաղորդակցական լեզվի բացակայությունը, որն էլ հեղինակին ստիպում է գիրք գրել բոլորին հասկանալի աշխարհաբար լեզվով, որը նույնացնում է «Ստամպոլու» լեզվին (=բարբառին) տաճկերենով խառը. «Ստամպոլու լեզուով գրենք ռամկօրէն, այսինքն՝ աշխարհաբառ մը՝ տաճկերենով խառը»³, գրում է նա։ Ինչպես տեսանք, Մ.Ավգերյանի նպատակը

¹ Նույն տեղում, էջ 312:

² Նույն տեղում, էջ 312:

³ Մ.Ավգերյանի հայացքները ներկայացնող այս հատվածն ավարտելուց հետո ուզում ենք անդրադառնալ Վ.Մնացականյանի մի հրապարակմանը (տես

մարդկանց ոչ թե լեզու սովորեցնելն էր, այլ բան հասկացնելը: Դա նշանակում է, որ նա իր գրքերի լեզվական ատաղձի մաքրության ու կանոնավորման ուղղությամբ այնքան էլ պահանջկոտ վերաբերմունք չպիտի դրսևորի, և դա հենց այդպես էլ է: Լեզվի նկատմամբ դրսևորած անփութությամբ, թե՛ պարզապես միայն հասկանալիության հասնելու ծգտման հետևանքն այն է լինում, որ երեք աշխարհաբար գրվածքներն էլ խճողված են տաճկերենով, գրաբարաբանություններով, զուգահեռ ծների գործածությամբ, մանավանդ տաճկական բառերի ու արտահայտությունների գործածության ոլորտում սահմանափակություններ չկան: Եթե նրա նախորդներն ու ժամանակակիցներն

Աշխարհաբարի՝ որպես գրական լեզվի պաշտպանության վաղ փորձերի մասին մինչաբովանական շրջան ԲԵՅ, 2, 1986), որտեղ տեղ է գտել մի անճշտություն: Հրապարակման հեղինակն, ըստ երևույթին, ամբողջովին չի ծանոթացել մինչաբովանական շրջանի աշխարհաբար հրատարակություններին, չնայած թվում է, որ հողվածում շոշափված նյութի առաջին թելադրանքը դա պետք է լիներ: Հրապարակման մեջ հեղինակը ներկայացնում է մի քանի հեղինակների (Հովհ. Հովով, Մ. Սեբաստացի, Բ.Դաիր, Ձ.Մարտիրոսյան) տեսակետները աշխարհաբարի վերաբերյալ՝ դրանք համարելով աշխարհաբարի պաշտպանության վաղ փորձեր: Այնուհետև Վ.Սնացականյանը գրում է. «Վերջապես այս ամենից հատուկ առանձնանում և իր բնույթով բուն "գրապայքարին" է հարում «Յորդոր առ գրագիտութիւն և այլն և այլն» (1840, Կալկաթա) գիրքը» (էջ 173), իսկ տողատակի ծանոթագրության մեջ նշում է, որ «գրքի հեղինակը» (կազմողը) հայտնի չէ տիտղոսաթերթի պակասության պատճառով» և որ «այն տարբեր հեղինակների գործերից կազմված ժողովածու է»: Գրքի վերնագիրը համարում է պայմանական, որովհետև այն ըստ էության առաջին մասի վերնագիրն է: Հողվածագիրը մի քանի մեջբերումներ է անում վերոհիշյալ գրքից, մենք այդ հատվածը այստեղ բերում ենք ամբողջական տեսքով. «Խորապես ըմբռնելով լեզվի դերը՝ գրում է. "Բալլիքը դուռը բանայ տէ, կուզէ ոսկի բալլիք է եղեր, կուզէ երկթէ, կուզէ փայտէ : Բան հասկըցող մարդը կըհասկընայ, որ ժողովորդին իսկը հասկընալէն կուզայ ասանկ բան ընելը"» (2) Առանձնակի արժեք է ներկայացնում այն, որ հեղինակը աշխարհաբարի պաշտպանությունը հիմնավորում է նաև այլ լեզուների պատմության փաստերով: "...Ամենն ազգին մէջ աշխարհաբառ լեզուն իրաւ որ գրով ալ ծաղկեայ է, իրավացիորեն գրում է նա, - մանաւանդ թէ աշխարհաբառ գիրք չըլլայ նէ՝ գրաբառ գրքերուն խյմէթը չի գիտցուիր ու գրաւոր գիտութիւնն ալ շատ առաջ չերթար, ուստի՝ ինքեար չեն ըներ աշխարհաբառին պիտանութիւնն ալ...» (3)» (էջ 174): Պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ նշված գրքի նշված հատվածը (առաջին մասը) Մ.Ավգերյանի «Դեղ կենաց» գրքի վերջաբանի վերատպությունն է, իսկ դրա վերնագիրը այդ վերջաբանի վերնագրի կրճատ տարբերակն է : Հիշենք, որ «Դեղ կենաց» գիրքը գրվել է 1808, տպագրվել՝ 1810 թվականին:

անհրաժեշտաբար տաճկերենն օգտագործում էին հայերեն բառերի ու արտահայտությունների իմաստները բացատրելու, հասկանալի դարձնելու նպատակով, և այն էլ հատուկ նշումներով ու քանակային սահմանափակությամբ, ապա Մ. Ավգերյանը դրանք օգտագործել է բուն շարադրանքում այնպես, որ շատ հատվածներ կարծես թե գրված են տաճկերենով՝ հատուկեմտ հայերեն բառերի օգտագործմամբ: Այդպիսի օտար բառերի առատությունը պարզապես հատուկ է եղել ժամանակի արևմտահայ աշխարհաբարին: Եթե մի կողմ թողնենք գրաբարաբանությունները, ապա կարելի է ասել, որ Մ.Ավգերյանը պարզապես գրառել է իր ժամանակի արևմտահայերենի նմուշներ, որի առանձնահատկությունն էր գերհագեծվածությունը օտար բառերով և «Ստամպոլու» բարբառի լեզվատարրերով:

Պետք է ասել, որ չնայած օտար բառերի, գրաբարյան ձևերի ու արտահայտությունների այսպիսի առատ ներթափանցումներին, այնուամենայնիվ, կարևորն այն է, որ աշխարհաբարն արտահայտված է իր բոլոր առանձնահատկություններով, այն է՝ արտասանական, հնչյունափոխական, քերականական, և, թերևս, ավելի ցայտուն, քան մյուս Մխիթարյանների լեզվում:

Ամփոփելով մեր խոսքը Մ. Ավգերյանի հայացքների և լեզվի մասին՝ ասենք նաև, որ այսպիսի լեզվական կիրառական բազմազանություն Մխիթարյաններից ոչ մեկի լեզուն չունի: Մ. Ավգերյանին նախորդած բոլոր հեղինակները աշխատել են եթե ոչ ամբողջովին, գոնե մասամբ կանոնի բերել իրենց աշխատանքների լեզուն: Այլ հարց է, թե դա նրանց ինչքանով է հաջողվել, մինչդեռ, թվում է, որ Մ. Ավգերյանն այդպիսի նպատակադրում չի էլ ունեցել:

Նշված լեզվական առանձնահատկությունները հավասարապես հատուկ են նրա աշխարհաբար երեք գործերին էլ: